

ՀԱՅԵՐԵՆԻ «Ռ» ԵՎ «Ր» ՀՆՉՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ժամանակակից գրական հայերենում և բարբառներում հստակորեն տարբերվում են (ր)-ն և (ռ)-ն որպես ինքնուրույն հնչույթներ իրենց յուրահատուկ բաշխումով և արտասանական-ակուստիկական տարբերություններով, Սակայն այդ երկու հնչյունների միջև գոյություն ունեն ինչպես արտասանական, այնպես էլ ակուստիկական որոշակի նմանություններ, Հավանաբար այս է պատճառը, որ շատ լեզուներում նման հնչյունները չեն հակադրվում միմյանց որպես ինքնուրույն հնչույթներ, այլ հանգես են գալիս միևնույն հնչույթի տարբերակների արժեքով, Այսպիսին է, օրինակ, անգլերենի (r) հնչույթը իր բարբառային թրթռուն [r] տարբերակով, որը գործածվում է միայն հյուսիսային Անգլիայում և Շոտլանդիայում¹, Երկու կամ նույնիսկ մի քանի արտասանական բնույթի [r]-ի ոչ հնչույթային հակադրությունը հանգիպում է նաև գերմաներենում, Ֆրանսերենում շփական [ʒ]-ը և լեզվակային [ʀ]-ը հնչույթաբանորեն չեն հակադրվում միմյանց և նրանց գործառնությունը պայմանավորված է աշխարհագրական և նույնիսկ հասարակական հանգամանքներով²:

Յուրահատուկ է ռուսերենի (р)-ի բաշխումը և ֆունկցիոնալ վիճակը, Ելնելով կառուցվածքից, ռուսերենում հակադրվում են քմայնացած և ոչ քմայնացած (р) հնչույթները, Ոչ քմայնացած (р) հանգիպում է (а), (о), (у), (ѣ) և (э) ձայնավորներից առաջ, իսկ քմայնացածը՝ (я), (е), (ю), (и), (е) ձայնավոր տառերից առաջ և այլ դիրքերում:

Սակայն հայի լսողությամբ ռուսերենի (р) և (р') տարբերությունները ոչ այնքան քմայնացման մեջ են, որքան ոչ քմայնացած (կոշտ) հնչյունի թրթռուն լինելու և քմայնացած (փափուկ) հնչյունի ոչ թրթռուն լինելու մեջ: Այդ լսողական տպավորությունը զուրկ չէ հիմքից, ինչպես այդ մասին վկայում են ռուսերենի մի քանի ուսումնասիրողներ՝ Ա. Տոմսոնը, Օ. Բրոկը³, որոնք նշում են քմայնացման և լեզվի թրթռումների համատեղելու դժվարությունը:

Այսպես, Ա. Ի. Տոմսոնը գրում է. «Լեզվածայրի թրթռումները առհասարակ մատչելի չեն բոլորին... և դրան էլ սխտեմի ազդեցության տակ ավելանում է քմայնացումը, որը հարմար է այլ բաղաձայնների, բայց ոչ «р»-ի համար, Հասկանալի է, որ նոր սերունդների մոտ լեզվի միջին մասի բարձրացումը կարող է նվազել (այսինքն р-ն կոշտանալ) կամ կատարվել ավելի ուշ, այսինքն արտասանվել r]»⁴: Այսպիսով, լեզվի արտասանական հնարավորությունների սահմանափակության պատճառով քմայնացումը առաջացնում է լեզվածայրի թրթռումների եթե ոչ լրիվ վերացում, ապա քանակի պակասում, որի հետևանքով առաջացած (р)-ն համապատասխանորեն ընկալվում է հայերի կողմից որպես հայերենի (ր) հնչյուն: Իսկ ռուսերենի կոշտ (р')-ն նմանվում է հայերենի ա-ին:

Հավ ուսումնասիրված լեզուներից իսպաներենում գոյություն ունի (r)-ի երկու հնչույթային տարբերակում, բայց նույնիսկ սովորական լսողությամբ կարելի է զգալ հայերենի և իսպաներենի համապատասխան հնչյունների տարբերությունը, Իսպաներեն (r')-ը ավելի թրթռուն է, կոշտ և

¹ D. Jones, An Outline of English Phonetics, 8th ed., p. 195.

² Տվյալ հոդվածում մենք ռուսերենի համար օգտագործում ենք ընդունված ռուսական տառադարձությունը, իսկ այլ լեզուների համար միջազգային հնչյունաբանական ասոցիացիայի (МФА) տառադարձությունը. հնչույթների համար օգտագործում ենք շեղ փակագծեր, իսկ նրանց տարբերակների համար՝ քառակուսի փակագծեր:

³ О. Брок, Очерк физиологии славянской речи. «Энциклопедия славянской филологии», 1910, вып. 5, էջ 36; А. Н. Томсон, Заметки к «Очерку физиологии славянской речи» О. И. Брока, РФВ, 1911, № 1, էջ 146.

⁴ Նույն տեղում, էջ 146:

տևական, քան հայերենինը, իսկ հայերենի (Դ)-ի և իսպաներենի (Դ)-ի միջև գոյություն ունեն ավելի էական տարբերություններ, որոնք վերաբերում են արտասանության թե՛ տեղին և թե՛ եղանակին:

Հայ լեզվաբանական գրականության մեջ ր-ի և ո-ի արտասանության վերաբերյալ եղած սովորյալները բավարար չեն և կարիք ունեն լրացման ու ճշտման: Պրոֆ. Մ. Արեղյանը ր-ն և ո-ն համարում է միևնույն տեղում և նույն եղանակով արտաբերվող հնչյուններ, միայն մեկ տարբերությամբ, որ ո-ի ժամանակ լեզվածայրի թրթռումներն ավելի ուժեղ են, քան ր-ի ժամանակ, Պրոֆ. Մ. Արեղյանը այսպես է բնորոշում հայերենի ր-ն և ո-ն. «...Ռ բաղաձայնի արտաբերության ժամանակ բերանը չափավոր բացված է լինում. վերին կտրիչ ատամների լինգին մոտեցած լեզվի ծայրը, ձայնալարերի հնչելիս, թեթև ձգված բարձրանում է դեպի առաջաքիմքը և օգի շփումից դողողում է: Բաղաձայնը նույն ո հնչյունն է, միայն լեզվածայրի դողողոցը շատ թույլ է: Այս երկուսի արտաբերության ժամանակ աղմուկը գրեթե անլսելի է մնում. բայց և այնպես դրանց հետ միացած աղմուկի աստիճանը տարբեր է՝ նայելով բարբառներին»⁵: Մոտավորապես նույնպիսի նկարագրություն ենք գտնում պրոֆ. Գ. Սևակի⁶ և Վ. Առաքելյանի⁷ մոտ: Փոքր ինչ այլ կարծիք է պրոֆ. է. Աղայանը: Նրա նկարագրությամբ ր-ի և ո-ի տարբերությունները վերաբերում են նրանց՝ մի կողմից՝ արտաբերման տեղին, իսկ մյուս կողմից՝ թրթռումների քանակին: Ըստ արտաբերման տեղի ո-ն նա համարում է ավելի ետին (լեզվաքմային), քան ր-ն, մինչդեռ վերջինս նա դասում է լեզվատամնայինների թվին:

Ր-ի արտասանության յուրահատուկ կողմն այն է, որ լեզվի ծայրն այդ դեպքում թրթռում է: Ռ-ն հանդիսանում է Ռ-ի տարբերակներից մեկը: Նրանց միջև տարբերությունը ստեղծվում է, մի կողմից՝ արտասանության տեղի, մյուս կողմից՝ թրթռումների շատության շնորհիվ: Ըստ արտաբերության տեղի ո-ն կարելի է համարել լեզվաքմային... Բացի այդ, լեզուն ո-ի արտասանության ժամանակ շփվում է ոչ թե ատամնաշարին, այլ քիմքին»⁸:

Այստեղ անհրաժեշտ է որոշ ճշտումներ մտցնել տերմինաբանության մեջ, «Շփում» (friction) բառի տակ սովորաբար հասկացվում է ոչ թե խոսքի օրգանների շփումը միմյանց հետ, այս հնարավոր էլ չէ (փորձեք շրթունքները կամ ատամները քսել միմյանց և ստանալ հոդաբաշխ ձայն), այլ դուրս մղվող օդի հոսանքի շփումը նեղվածքի եզրերին, որը առաջանում է խոսքի գործարանների այս կամ այն տեղում: Այսպես, (ս)-ի և (զ)-ի դեպքում շփումը ստեղծվում է լեզվի առջևի մասում առաջացած փոքր շրջանակի նեղվածքի միջով անցնող օդի հոսանքով: (վ)-ի և (ֆ)-ի դեպքում շփումը ստեղծվում է ստորին շրթունքի և վերին կտրիչների միջև անցնող օդի հոսանքով: (Ռ)-ի արտաբերման դեպքում հավանաբար պետք է խոսել լեզվի ծայրի օդի հոսանքի արտամղման հետևանքով առաջացող թրթռումների մասին: Ինչ վերաբերում է (ո)-ի և (ր)-ի կազմավորման տեղին, ապա ինչպես երևում է վերը հիշվածից, պրոֆ. է. Աղայանը ընդունում է (ր)-ի լնդայնությունը, շտարածելով այն, սակայն, (ո)-ի վրա: Իսկ ինչ վերաբերում է այս հնչյունների կազմավորման ժամանակ խոսքի ակտիվ օրգանի գործողությանը, ապա բոլոր հնդի-նականները ընդունում են, որ լեզվի ակտիվ մասը նրա ծայրն է:

Մի փոքր այլ տեսանկյունից է քննարկում (ո)-ն և (ր)-ն պրոֆ. Գ. Ղափանցյանը⁹: Խոսելով (ր)-ի շատ տարբերակների գոյության մասին ընդհանուր լեզվաբանական առումով, Գ. Ղափանցյանը դրում է, որ հայոց լեզվում հանդիպում են (ր)-ի այդ բոլոր տեսակները: Այսպիսով, ստացվում է, որ հայոց լեզվում կան լնդային (այսինքն կազմված լնդերթին մոտեցող լեզվի ծայրով), ատամնային (կազմված լեզվի ծայրի և ատամների միջև), միջատամնային (կազմված լեզվի ծայրի և ստորին ու վերին ատամների միջև), ետնալեզվային (կազմված լեզվի ետին մասի և քիմքի հանդիպակաց մասի միջև), միջնալեզվային (լեզվի միջին մասի և կոշտ քիմքի միջև) և նույնիսկ շրթնային (կազմված երկու շրթունքների իրար քսվելով) (ր)-եր:

Մի կողմ թողնելով հայոց լեզվում (ո)-ի այսքան տարբերակների գոյության հնարավորության հարցը, նշենք միայն, որ հայոց լեզվի (ո)-ի այսպիսի մեկնաբանման դեպքում խախտվում է այս 2 հնչյունների՝ (ո)-ի և (ր)-ի հնչյութաբանական հակադրության սկզբունքը: Չէ որ եթե մենք ելնում ենք միայն հնչյունների արտաբերական հնարավոր տարբերություններից, հաշվի չառնելով

5 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 82:

6 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 86:

7 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 27—28:

8 է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 144:

9 Գ. Ղափանցյան Ընդհանուր լեզվաբանություն, 1939, էջ 64—65:

լեզվում նրանց ֆունկցիան, ապա հնարավոր է, որ (ր)-աձև հնչյունների էրանգների քանակը հայոց լեզվում շահմանափակվի երկուսով: Այնուամենայնիվ պարզ չէ, թե ո՞րն է կարևոր, ի՞նչ հատկանիշով են տարբերվում և հակադրվում (ո)-ն և (ր)-ն հայոց լեզվում: Ինչո՞ւ առանձին հատկանիշները կարևոր չեն և նույնիսկ չեն նկատվում այդ լեզվով խոսողների կողմից, իսկ ուրիշները անհրաժեշտ են և նրանց փոքրագույն փոփոխությունները արտաբերման մեջ զգացվում են և տարբերակվում: Նշենք, որ պրոֆ. Գ. Ղափանցյանի կարծիքը հայոց լեզվում (ո)-ի բոլոր հնարավոր տարբերակների գոյության մասին չի հաստատվում փորձառական տվյալներով: Բայց նախքան վերջիններիս շարագրման անցնելը, անհրաժեշտ է մանրամասնորեն կանգ առնել հայերենի (ր)-ի և (ո)-ի հնչույթաբանական վիճակի և նրանց բաշխման վրա:

Ժամանակակից գրական հայերենում (ր) ձայնորդը չի հանդիպում բառասկզբում ձայնավորներից կամ բաղաձայններից առաջ: Բացառություն է կազմում միայն բառը՝ Բաֆֆի բառում՝ շնայած գրվում է «ր», բայց միշտ արտասանվում է [ո], ուստի դա չի կարող համարվել բացառություն: Մինչդեռ (ո)-ն հանդիպում է բառասկզբում բոլոր ձայնավորներից առաջ:

Առհասարակ (ո) հնչույթը քիչ է հանդիպում բուն հայերեն բառերում, այլ հանգես է գալիս հին և նոր փոխառություններում, ինչպես, օրինակ՝ ռոճիկ, ռամիկ, ռուբլի և այլն: Դիրքային սահմանափակումներ նա չունի: (Ր) հնչույթն, ընդհակառակը, չհանդիպելով բառասկզբում, հանդիսանում է հայերենի ամենահաճախ գործածվող բաղաձայններից մեկը, և այդ առումով նրա հաճախականությունը մի քանի անգամ ավելի մեծ է (ո)-ից:

(ո)-ն և (ր)-ն հայերենում ինքնուրույն հնչույթներ են և կարող են իրար հակադրվել տարբեր դիրքերում, կազմելով այսպես կոչված հակադիր (օպոզիցիոն) զույգեր՝

արա — առա¹⁰

տար — տառ

բար — բառ

գար — գառ

սարը — սառը

բերի — բեռի

բեր — բեռ

արու — առու

բարի — բառի (սեռ. հ.)

կուր (գետ) — կուռ

կարք — կառք

շար — ճառ

համար — համառ

Ինչպես երևում է բերված օրինակներից, (ր)-ի և (ո)-ի հակադրությունը կարող է հանդես գալ ինչպես բառավերջում, այնպես էլ բառամիջում: Բառասկզբում դրանք հակադրություններ չեն կազմում, որովհետև (ր)-ով սկսվող բառ չկա:

Նշենք նրանց մի ուրիշ առանձնահատկություն՝ ևս, որը վերաբերում է հնչույթաբանական զուգորդման օրենքներին: Հայտնի է, որ բոլոր լեզուների հնչյունները ունեն որոշակի զուգորդման սահմանափակումներ: Ընդ որում տարբեր լեզուներում դրանց դրսևորումները տարբեր են՝ և թե չլինեն այդ սահմանափակումը, ապա բավարար կլինեն թվարկել բոլոր հնչույթները և հաշվել նրանց հնարավոր զուգորդումների քանակը: Սակայն բնական լեզուներում գրությունը այդպես չէ, ինչպես տարբեր լեզուներում նման հնչույթներն իրարից տարբերվում են իրենց հնչույթային արձեքով, այնպես էլ դրանք, գուցե և ավելի մեծ չափով, տարբեր են զուգորդման կանոններով: Դա նվազագույն չափով է վերաբերում ձայնավոր + բաղաձայն կամ բաղաձայն + ձայնավոր կապակցություններին, որովհետև դրանք ամենագործածական և արտասանական տեսակետից բնական զուգորդումներ են բոլոր լեզուներում: Այդ զուգորդումները, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Տրուբեցկոյը¹¹, բաղաձայնների և ձայնավորների գոյության տրամաբանական նախադրյալներն են: Եվ շնայած սրան, հավանաբար բոլոր լեզուներում էլ, որոշ դիրքերում կարող են չհանդիպել բ + ձ կամ ձ + ր զուգորդության որոշակի տիպեր պատմականորեն ձևավորված արտասանական սովորույթների պատճառով: Այդպես է հայերենում (ր) ձայնորդի բառասկզբում հանդես չգալու սահմանափակությունը: Երևում է սահմանափակումները հատկապես (ր)-ի և (ո)-ի այլ բաղաձայնների հետ զուգորդումների ժամանակ: Այս առումով նրանց միջև եղած տարբերությունները ավելի

¹⁰ Այստեղ և հետագայում օրինակները տալիս ենք արտասանական գրությամբ:

¹¹ Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960, էջ 119

զգալի են և փաստորեն բնութագրում են այդ երկու հնչյւթնների արժեքայնությունը, Այստեղ անհրաժեշտ է ճշտել հոգվածում գործածվող «զուգորդում» և «կապակցություն» տերմինների իմաստը: Կապակցություն ասելով մենք նկատի ունենք մեկ վանկում հանդես եկող երկու բաղաձայնների հաջորդականությունը, որոնց միջև ոչ մի ձայնավոր (այդ թվում և գաղտնավանկային «ը») չի արտասանվում: Զուգորդման նման տիպերը հիմնականում հանդիպում են բառասկզբում և բառավերջում, որովհետև տեսականորեն տվյալ լեզվի ամեն մի վանկ կարող է գտնվել կամ դադարից հետո (բառասկիզբ), կամ դադարից առաջ (բառավերջ): Օրինակ՝ հաբս, վաբս, քաբս, գոբս բառերում բառավերջի զուգորդումները պետք է համարել կապակցություններ: Այս կապակցություններից բացի բառամիջում հանդիպում են բազմաթիվ բաղաձայնական զուգորդումներ, որոնք հանդես են գալիս ձևայինների և այլ վանկերի հանդիպման հետևանքով, բայց, ի տարբերություն իսկական կապակցությունների, վանկատման ժամանակ դրանք բաժանվում են և նրանց բաղադրիչները անցնում են տարբեր վանկերի: Այլ կերպ ասած, այդ բաղաձայնական զուգորդումից առաջին բաղաձայնն իմպլոզիվ է (ուժեղ սկզբով) և անցնում է նախորդ վանկին, իսկ երկրորդը՝ էքսպլոզիվ (ուժեղ վերջավորությամբ) և անցնում է հաջորդ վանկին, իսկ երր և չորս բառամիջում հանդիպում են 3 կամ ավելի բաղաձայն, ապա սովորաբար նրանցից առաջինը լինում է իմպլոզիվ, իսկ երկրորդն ու երրորդը կազմում են կապակցություն և պատկանում են հաջորդ վանկին, այսինքն էքսպլոզիվ են: Ի միջի այլոց վանկատման հարցը սերտորեն կապվում է սկզբնական և վերջնական կապակցությունների հետ և պահանջում է ինքնուրույն ուսումնասիրություն լեզվի ամբողջ հնչյունական համակարգի տեսանկյունից¹²:

Բառամիջի զուգորդումների օրինակ են հետևյալ բաղաձայնների խմբերը՝ առբիվ, խռպոտ, բլրսել, ձնուով, թրշվել (թրշվել), պաբվալ, բաբցանալ (բարձրանալ), բերկություն, կրքմածություն և այլն:

Ինչպես ցույց են տալիս բաշխական վերլուծության տվյալները, հայերենում (բ)-ն ամենից շատ արժեքականություն ունեցող բաղաձայնն է: Զհանդիպելով բառասկզբում՝ ոչ բաղաձայններից, ոչ էլ ձայնավորներից առաջ, բառավերջում նա կապակցվում է համարյա բոլոր բաղաձայնների (և ձայնավորների) հետ: Բայց այս կապակցությունները խիստ միակողմանի են. այսինքն (բ)+բաղաձայն տիպի¹³: Հակադարձ զուգորդումներ չկան:

Ստորև բերում ենք (բ)-ի հետ հանդիպող բառավերջի կապակցությունները ըստ հայ-ռուսերեն բառարանի հայերեն բառացանկի («Հայ-ռուսերեն բառարան», 40000 բառ, Ա. Ղարիբյանի խմբագրությամբ, Երևան, 1955):

(բ) + պայթական կապակցություններ

- բբ բորբ
- բգ գորգ, սիրամարգ, անարգ
- բդ սարդ, կրցորդ, դողորդ, յուրդ, խլուրդ, կախարդ
- բպ ծերպ, ճարպ, կերպ
- բտ մարտ, գորտ, սերտ, սիրտ
- բկ վարկ, զարկ, հարկ
- բփ վորփ(բ), երփ (բ), սուրփ (բ), թարփ
- բթ վարթ(գ), մարթ(գ), թերթ, որթ(դ), նյարթ (դ)
- բք վարք, անկարք(գ), միրք(գ)

(բ) + կիսաշփական կապակցություններ

- բծ գործ, զերծ, թործ
- բց փորց(ձ), հարց, բարց(ձ), վերադարց(ձ)
- բձ սըրտամերձ, ուղերձ, լորձ, ձորձ

¹² Е. Курилович. Вопросы теории слога. «Очерки по лингвистике», М., 1962, էջ 296—298.

¹³ Այդ փաստը խոսում է կապակցությունների սիմետրիկության մասին, որի վրա ուշադրություն է դարձրել Կուրիլովիչը: Եթե բառասկզբում հանդիպում են аb տիպի կապակցություններ, ապա, բնական է ենթադրել, որ տվյալ լեզվում կհանդիպեն և ba բառավերջի կապակցություններ, մի բան, որ այս դեպքում ապացուցվում է հայերենի տվյալներով:

- րճ կարճ, հակիրճ, սուրճ, պերճ
- րչ արչ(չ), վերչ(չ)
- րջ հաղարջ, լուրջ, կամուրջ, աշաւուրջ, ստերջ

(ր) + ձայնուղ կապակցութիւններ

- րմ թարմ, սերմ
- րն շնա
- րյ շկա
- րլ շկա
- րր տարր (բաղադրատարր, սկզբնատարր, ջերմատարր, այլատարր, բազմատարր, համատարր), անդորր
- րո — շկա

(ր) + շփական կապակցութիւններ

- րխ թորխ, մարխ, մորխ, շարխ
- րղ շկա
- րժ շարժ, վարժ, երկրաշարժ, հետաքրքրաշարժ
- րզ գուրզ, մարզ, պարզ
- րս թարս, դուրս, վարս, Մարս
- րշ գարշ, գորշ, խորշ, լըպիրշ
- րվ ներվ*, ռեզերվ*
- րք շարք*, տորք*

Նույն դիրքում (ռ) ձայնորդը համարյա չի կապակցվում այլ բաղաձայնների հետ: Այստեղ կամիայն 2 տիպի կապակցութիւն՝ -ոք (բուն հայերեն բառերում) և -ոն փոխառյալ բառերում, վերջինիս արտասանութիւնը խորթ է հայերենի արտասանական բազային: Օրինակներ՝

- ոք փառք, սպառք, ձեռք, հաշվառք, կառք
- ոն էքստեն, մոդեն, կոմիտեն, ցիստեն

Տեսնենք, թե ինչպիսի բառամիջի զուգորդումներ են կազմում (ր)-ն և (ռ)-ն: Բնական է պատկերացնել, որ բառամիջում և բառերի հոսքի մեջ բառավերջի բաղաձայնները պետք է հանդիպեն բառասկզբի բաղաձայնների հետ: Եթե (ռ) ձայնորդը հանդիպում է բառասկզբում ձայնավորներից առաջ կազմելով ձեռնիպի կապակցութիւն և բառավերջում՝ ձայնավորներից հետո կազմելով ձեռնիպի կապակցութիւն, ապա նրա համար տեսականորեն հնարավոր են 60 բառամիջի բաղաձայնական զուգորդումներ (այսինքն ու 30 բաղաձայն, 30 բաղաձայն + ո կապակցութիւններ): Դրանցից միայն 30-ն է գրանցված մեզ մոտ:

(ր)-ի համար տեսականորեն հնարավոր է 30 զուգորդում, իսկ իրականում հանդիպում են աւելի քիչ: Ստորև բերում ենք հանդիպող զուգորդումների տիպերը մեկական օրինակներով:

- (ր) բաղաձայն տիպի բառամիջի զուգորդումներ
- րր-բորրոս, -րգ-ներգրավել, -րդ-հըրդեհ
- րպ-ճարպոտ, -րտ-ավարտել, -րկ-երկար
- րփ-հարփել, րթ-հերթափոխ, -րք-սարքել,
- րվ-ուրվական, -րֆ-տորֆային, -րզ-կորզել,
- րս-սարսուռ, -րժ-արժանի, -րշ-թորշոմել,
- րղ-բորղու, -րխ-խարխուլ, -րհ-արհամար(հ)ել
- րմ-կարմիր, -րն-արնոտ, -րր- տարրական,
- րլ-վերլուծել, -րյ-արյուն, -րձ-լորձունք,
- րժ-կործանել, -րց-հարցում, -րջ- շըրջան,
- րճ-կարճել, -րչ-կորչել:

* Այս կապակցութիւնները հանդիպում են միայն փոխառյալ բառերում:

Ձկա -որ- զուգորդումը, որը արտասանորեն արդարացվում է, քանի որ նրանց արտասանությունը շատ նման է:

Բառամիջի բաղաձայն + (ր) զուգորդումները

-բր- Աբրահամ (կամ՝ եբրայերեն), -գր-վերագրել,
-դր- տրամադրություն, պր-գպրոց, -տր-պատրաստ,
-կր- մրկրատ, -փր-սափրիչ, -թր-ծոթրին, -քր-փոքրիկ,
-վր- նվրոպա, ֆր- Աֆրիկա, -զր-եզրակացնել, -սր-կիսրար, -շր-փըշրել, -ղր-ծաղրել,
-խր-տըխրել, -հր-բահրա, -մր-թըմրել, -նր-հանրապետություն, -րր-տարրական, -յր-հայրենիք,
-լր-բըլրոտ, -ծր-ծոծրակ, -ցր-խըստացրած, -ճր-ոճրագործ, -չր-պըչրանք, -գր-հագրի (օտար),
-ձր-անձրև (այս եռակի զուգորդության մեջ): Ձեն հանդիպել -որ-, -ջր-զուգորդումները:

Բառամիջի զուգորդումները (ո)-ի հետ

-որ- զոռրա, -ոգ- գոռգոռալ, -ոդ- դեմառդեմ, -ոպ-խըռպոտ,
-ոտ- զըկըռտոց, -ոկ- պառկել, -ոթ- առթիվ, -ոք-ճեռքով,
-ով- կըռվել, -ոհ-առհասարակ, -ոմ-առմիշտ, -ոն-բըռնել,
-ոռ- դըռռալ, -ոլ-իռլանդացի, -ոյ-առյուծ, -ոծ-կըռծել,
-ոց- սառցադաշտ, -ոճ- պըռճոկել, -ոչ-թըռչել:

Ձկան -ոթ-, -ոգ-, -ոչ-, -ոժ-, -ոդ- -ոխ-, -որ-, -ոձ-, -ոջ- զոգորդումները:

Բաղաձայն + (ո) զուգորդումներ

-գո- ագռավ, -պո- ճըպոտտ, -փո- սըփռել, -տո- պատռել, -կո- ակռա, -թո-ճոթռել,
-շո- կըշռել (բարբառային ազդեցություն), -ժո- խըժռել, -մո- մամռապատ, -ռո- դըռռալ, -յո- ժայռոտ:

Ձկան փոխառական, շփական և մի քանի ձայնորդ + (ո) զուգորդումներ: Ընդամենը գրանցվել են 11 զուգորդում՝ հիմնականում պայթականների հետ: Մյուս կողմից, այդ դիրքերում հաճախ հանդիպում են զուգորդումներ (ր)-ի հետ, և այդ իսկ պատճառով խոսքի մեջ հաճախ ր-ի փոխարեն արտասանվում է (ո)-ն. հնչույթաբանական հակադրության բացակայությունը այդ դիրքերում պայման է ստեղծում նրանց փոխարինմանը, այսինքն չեզոքացմանը: Այսպես, խոսակցական լեզվում շատ հայեր արտասանում են Առչակ Արչակ-ի փոխարեն, Առզնի փխ. Արզնի, հոռթ փխ. հորթ, առժեք փխ. արժեք, հեռթ փխ. հերթ, խոռթ փխ. խորթ:

Դրանով են հավանորեն բացատրվում աշակերտների և ուսանողների բազմաթիվ սխալները, որոնք գրավոր խոսքում վերարտադրում են իրապես արտասանվող և լսվող ձևերը¹⁴, Այլ կերպ ասած (ո)-ի և (ր)-ի այս դիրքերը կարելի է համարել որոշ չափով չեզոքացման դիրքեր, որտեղ հակադրության բացակայության հետևանքով նրանք փոխարինվում են միմյանցով:

Ինչ վերաբերում է ր կամ ո ունեցող 3 կամ 3-ից ավելի բաղաձայն ունեցող խմբերին, ապա այստեղ նրանց մեջ բացահայտվում են ավելի խոր տարբերություններ, որոնք վերաբերում են թե՛ բաղադրյալների բնույթին, թե՛ նրանց հաջորդականությանը: Ստորև մենք տալիս ենք այդ խմբերի աղյուսակները, որոնց օրինակները տեղի խնայողության համար չենք բերում (տե՛ս աղյուսակ № 1 և 2):

Այսպիսով, արդեն հնչույթաբանական մակարդակում (ո)-ի և (ր)-ի միջև հայտնաբերվում են մեծ տարբերություններ, որոնք վերաբերում են նրանց տարբեր բաշխմանը, նրանց տարբեր կապակցությանը այլ հնչյունների հետ, նրանց տարբեր դիրքային սահմանափակություններին և տարբեր վալենտականությանը. բայց և այնպես այն փաստը, որ նրանք հանդիպում են միևնույն դիրքերում և կարող են հակադրվել միմյանց՝ կազմելով հակադրական զույգեր, խոսում է նրանց հնչույթայնության մասին: Այդ 2 հնչույթների փոփոխակի գործածությունը որոշ՝ իրար բացա-

¹⁴ Այս կամ այն բանի ճիշտ արտասանությունը կապված է լեզվի ուղղախոսական նորմայի հետ և վերջինիս սահմանումը պահանջում է, մեր կարծիքով, լուրջ վիճակագրական ուսումնասիրություն: Այստեղ չի կարելի բավարարվել որոշումներով, այլ պետք է հաշվի առնվի զարգացման միտումը, արտասանության տարածվածությունը, որովհետև լեզուներում շատ հաճախ մի քանի ձևերից հաղթող է դուրս գալիս սխալը:

ուղղ դիրքերում, խոսում է նրանց մասամբ արտասանական և ակուստիկական մոտիկության մասին, որ հաստատվում է նաև մեր փորձառական տվյալներով:

Նախքան փորձերի տվյալների շարադրանքին անցնելը անհրաժեշտ է մի երկու խոսքով նկարագրել փորձերի մեթոդիկան և սարքերը, որոնցով կատարվել են դրանք:

Քմանկարահանումը կատարվել է ՓՈՒ-1 ֆոտոպալատոգրաֆի վրա, որը պատրաստված է ԳԱ ԼՆԳՎԻ ինստիտուտում ինժ. Սկվորցովի նախագծով:

Քմանկարահանման սկզբունքը շատ պարզ է. փաստորեն դա մի հաստոց է մարդու վերին քիմքը հայելու միջոցով նկարահանելու համար: Նախքան նկարահանումը փորձարկվողի լեզվին քսվում է կոնտրաստ նյութ (մեր փորձերում որպես այդպիսի նյութ ծառայել է ակտիվացրած ածխի փոշին ջրի հետ խառնած), ապա այդ նախապատրաստումից հետո փորձարկվողը արտասանում է նախապես ընտրված բառը կամ վանկը, և այնուհետև թեք ամրացված հայելին դնելով բերանը, լուսանկարահանվում է վերին քիմքի պատկերով: Վերին քիմքի վրա արտասանության հետևանքով մնում են լեզվի սև հետքեր, որոնց ձևով կարելի է որոշել արտասանության տեղը և եղանակը: Քմապատկերների տվյալները զգալի չափով լրացվում են լեզվապատկերներով, որոնցով կարելի է պատկերացնել լեզվի մասնակցության եղանակը այս կամ այն հնչյունը արտաբերելիս: Վերջիններիս նկարահանման ժամանակ կոնտրաստ նյութով պատվում է կոշտ քիմքը և արտասանության հետքերը մնում են լեզվի վրա, և այս վերջիններով որոշում են, թե լեզվի որ մասն է մասնակցել տվյալ հնչյունի արտասանությանը:

Ռենտգեն նկարները ստացվել են Երևանի ռենտգեն-օնկոլոգիական ինստիտուտում ТУР-Д—1000-2 ապարատի վրա: Հետևյալ պայմաններում՝ 95—110 կվ, 0,007 վրկ, 150 միլիամպեր (ռենտգեն նկարահանումները ղեկավարել է պրոֆ. Յ. Ա. Քերոբյանը):

Փորձառական նյութը նախապատրաստելիս մենք աշխատել ենք ընտրել այնպիսի ուժեղ և թույլ հնչադիրքեր, որտեղ (ռ)-ն և (բ)-ն լինեն ըստ հնարավորին միանման պայմաններում, հիմնականում ետնալեզվային ձայնավորների շրջապատում: Այնուհետև աշխատել ենք որպես արտասանական միավորներ ընտրել ոչ թե վանկեր կամ առանձին հնչյուններ, այլ միավանկ բառեր, որովհետև այս դեպքում նույնիսկ անփորձ դիկտորները բառերը արտասանում են շատ բնական կերպով: Մեր փորձերին մասնակցում էին հիմնականում 15—30 տարեկան աղջիկներ և տղաներ, որոնց արտասանությունը զերծ է բարբառային արտասանության հետքերից և, կարելի է ասել, համապատասխանում է ուղղախոսության պահանջներին:

ՔՄԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ԼԵԶՎԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Առաջին իսկ կատարած փորձերի տվյալները ստիպեցին մեզ վերանայել հայագիտության մեջ(բ)-(ռ)-ի արտասանության մասին ընդունված կարծիքը և ի հաստատումն նոր կարծիքի կատարել ևս մի շարք փորձեր նորանոր դիկտորների մասնակցությամբ:

Նոսելով (բ)-ի և (ռ)-ի արտասանության տեղի մասին, անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրություն դարձնել, թե լեզվի քսուկները որ զոնայում են հետքեր թողնում: Բազմաթիվ քմապատկերներից երևում է, որ (ռ)-ի ժամանակ լեզվի հետքերը մնում են լնդերքի (ալվեոլների) վրա: Առանձին դեպքերում այդ զոնան կարող է մի քիչ ետ գնալ դեպի կոշտ քիմքը, կամ առաջ՝ ատամները, բայց մեծ մասամբ նրանց տեղը լնդերքն են (տե՛ս նկ. 1, 2, 3, 4):

Ինչ վերաբերում է (բ)-ի արտասանությանը, ապա նրա արտասանական եղանակի առանձնահատկության պատճառով լեզվի ծայրը լնդերքի վրա հետքեր չի թողնում: Լեզվաքսուկների հետքերը սկսվում են քիմքի կողերում և գալիս վերջանում են ժանիքների մոտ (տե՛ս նկ. 5, 9): Այսպիսով (բ)-ի և (ռ)-ի քմապատկերների համեմատությունը ցույց է տալիս, որ շնայած երկուսի արտասանական զոնան էլ լնդերքն են, բայց (ռ)-ի ժամանակ հետքերը մի քիչ ավելի մոտ են ատամներին, իսկ (բ)-ի ժամանակ նրանք ընդհատվում են ավելի ետին շրջանում:

Լեզվաբանական գոյություն ունեցող բաժանման համաձայն (բ)-ի արտասանական զոնան կարելի է համարել ետալվեոլային: (բ)-ի արտասանական զոնայի մի քիչ ետ լինելու օգտին են խոսում նաև № 13, 17, 18, 21 և 22 նկարները:

Լեզվի կողքի քսուկները բավականին հեռու են միմյանցից և թողնում են օդային լայն անցք, մի բան, որով տարբերվում են շփական ձայնորդները բաղաձայններից: Հետքերի ամենամոտ տեղում տարածությունը այնքան լայն է, որ մոտենում է ձայնավորների արտասանությանը (տե՛ս նկ. 17 և 18):

Այնուամենայնիվ (բ)-ի և (ռ)-ի արտասանական տարբերությունները ոչ թե արտասանական զոնայի, այլ լեզվածայրի աշխատանքի մեջ է: Այսպես, (ռ)-ի բոլոր քմապատկերներում հստակ



Σελ. 1
[r] " ροωα "



Σελ. 2
[n] " ηοοδρ "



Σελ. 3
[n] " ρωαη "



Σελ. 4
[r] " φωαη "



Σελ. 5
[r] " ωρω "



Σελ. 6
[n] " ηοοδρ "



Σελ. 7
[n] " ηοοδρ "




Σελ. 8
[n] " ηωα "



Σελ. 9
[r] " δωρ(ελ) "




Σελ. 10
[n] " φωαη "



Σελ. 11
[n] " ηωα "



Σελ. 12
[n] " ηοοδρ "



Σελ. 13
[r] " ροωαη "



Σελ. 14
[n] " ηοοδρ "



Σελ. 15
[n] " ηωα "



Σελ. 16
[n] " ηοοδρ "



Նկ. 17
[p] "բար"



Նկ. 18
[p] "արա"



Նկ. 19
[n] "ռուբ"



Նկ. 20
[n] "ռալ"



Նկ. 21
[p] "գար"




Նկ. 22
[p] "րուպե"



Նկ. 23
[n] "ռուբ"



Նկ. 24
[n] "ռուբ"



Նկ. 25
— n —



Նկ. 26
[p] "արա"



Նկ. 27
[n] "գար"



Նկ. 28
[n] "ռուբ"



Նկ. 29
[n] "ռուբ"




Նկ. 30
[p] "արա"




Նկ. 31
[p] "արա"




Նկ. 32
[n] "ռուբ"



Նկ. 33
[p] "գար"



Նկ. 34
[n] "արա"



Նկ. 35
[p] "արա"

երևում են լեզվածայրի հարվածների հետքերը լնդերքին (Լրբեմն ուժեղ, երբեմն թույլ, իսկ (ր)-ի քմապատկերներից և ոչ մեկի վրա այդպիսի հետքեր մենք չենք գտնում (հմմտ. նկ. 2, 3 և 5, 9, 15, 16, 17, 18)։

(Ռ)-ի բոլոր նկարներում հպման հետքերը տարբեր ուժի և հստակության են, սակայն ոչ մի տեղ այդ հետքերը չեն կազմում միաձույլ արտասանական զոնա, այնպես, ինչպես (տ), (դ) կամ (թ)-ի ժամանակ, քան խոսում է այն մասին, որ լեզվի ծայրը իր ուժեղ թրթռումների հետևանքով է դիպչում լնդերքին, ամեն անգամ թողնելով մեկ հետք։ (Ռ)-ի արտառանության ժամանակ, ինչպես հայերենի այլ հնչյունների դեպքում, բառավերջում նկատվում է արտասանության թուլացում։ Օրինակ ո-ն «փառ» բառում թողնում է ավելի թույլ և սակավաթիվ զարկեր, քան ո-ն ռոմբ կամ ռակ բառերում (տե՛ս նկ. 4, 16 և 2, 11, 12)։

Զգացվում է (ո)-ի արտասանության որոշ ինքնուրույնություն, այսինքն նրա քմապատկերները զգալի չեն ազդվում հարևան ձայնավորներից։ Օրինակ՝ «ռակ» բառի քմապատկերներում լեզվի հետքերը անցնում են կողքի ատամների եզրերով։ Երբ ո-ին հետևում կամ նախորդում են ետնալեզվային շրթնայնացած ձայնավորներ, ապա նրանք զգալի ազդեցություն չեն թողնում (ո)-ի քմապատկերների վրա, մասնավոր լեզվի զարկերի հետքերի վրա։ Անշուշտ, (ո)-ի երանգի վրա (ու)-ն, (օ)-ն թողնում են որոշ ազդեցություն, բայց դա պայմանավորված է բերանի խոռոչի ձևով, որը (ու)-ի և (օ)-ի ժամանակ նեղանում է ետին մասում և լայնանում ու երկարում առջևի մասում (շրթունքների կլորացման հետևանքով)։

Սակայն այդ ազդեցությունը երկրորդական երանգի վրա է, իսկ հիմնական արտասանական բնույթը և տեղը չեն ազդվում հարևան ձայնավորներից (տե՛ս նկ. 2 և 11)։

Այդ բոլորը ասում են այն մասին, որ (ո)-ի ժամանակ հիմնական արտասանական օրգանը լեզվի ծայրն է իր մոտակա եզրերով, որը ուժեղ թրթռումների ժամանակ հետքեր է թողնում լնդերքի վրա և դրա հետևանքով ստացվում է դողյոդոն ձայն։ Լեզվածայրի հպումները լնդերքին պարտադիր են։ Նրանք կարող են լինել ավելի բազմադարձ և ուժեղ բառակզրում ուժեղ արտասանելու դեպքում, կամ լինել ավելի թույլ և սակավազարկ՝ բառավերջի դեպքում, բայց բոլոր քմապատկերներում նրանք կան և տեղայնացված են լնդերքի վրա, Այս պատկերը, ինչպես տեսանք, հիմնականում շի հակասում ընդունված նկարագրությանը։

Այլ պատկեր է նկատվում (ր)-ի քմապատկերները ուսումնասիրելիս։ Լեզվի կողքերը ամուր սեղմված են վերին քիմքի եզրերին, մինչև առաջին արմատատամների կամ ժանիքների գիծը (տե՛ս նկ. 1, 9 և 18)։ Դա վկայում է (ր)-ի նեղվածքայնության մասին։ Չայնորդ (ր)-ի նկարների համադրումը (շ)-ի և (ծ)-ի հետ ցուցաբերում է զարմանալի նմանություն (նկ. 9, 13-ը հմմտ. 33 և 34-ի հետ), (շ-ծ) շփականների և (ր)-ի միջև գոյություն ունեցող տարբերությունները վերաբերում են միայն նեղվածքի լայնությանը (ւ՛)-ի ժամանակ նա մի քիչ ավելի լայն է, քան (շ)-ի և (ծ)-ի ժամանակ։

Այստեղ տեղին է հիշել պրոֆ. Արեղյանի մի շատ արժեքավոր դիտողությունը այն մասին, որ հայերեն բարբառներում գոյություն ունի (ր)-ի մի տարբերակը, որը իր հնչա-արտասանական որակով տարբերվում է սովորական (ր)-ից և նմանվում (շ)-ին և (ծ)-ին երբեմն այն աստիճանի, որ շատ բառերում նույնիսկ փոխարինվում է նրանցով։ Այսպես, «երեկի» փոխարեն արտասանվում է «ժեկ», «մարդիկ», «Մարթա», «Վարդան»-ի փոխարեն արտասանվում է «մաշտիկ», «Մաշտա», «Վաշտան»¹⁵։

Այս դիտողությունը հաստատում է (ր)-ի վերաբերյալ փորձառական տվյալներից հանած մեր եզրակացությունը, որի համաձայն (ր)-ն շփական (նեղվածքային) է։ (Ր)-ից (շ)-ի և (ծ)-ի անցումը շատ հեշտ է, որովհետև նրանց միջև եղած տարբերությունը վերաբերում է նեղվածքի լայնության աստիճանի և լեզվածայրի դիրքին։ (Ր)-ի ժամանակ նեղվածքը ավելի լայն է։

Ինչ վերաբերում է ամենաակտիվ օրգանի՝ լեզվի աշխատանքին (ր)-ի և «ռ»-ի արտասանության ժամանակ, ապա այդ մասին կարելի է դատել լեզվապատկերների տվյալներից։ Այս վերջիններս հաստատում և լրացնում են քմապատկերների տվյալները։

Այսպես, եթե (ռ)-ի ժամանակ լեզվի ծայրի վրա միշտ մնում են քիմքին կպած հարվածների հետքեր, ապա (ր)-ի ոչ մի լեզվապատկերում այդպիսի հետքեր չկան (տե՛ս նկ. 26, 30, 31, և հմմտ. 27, 28, 29-ի հետ)։ Հետքերը սահմանափակված են լեզվի եզրերում և չեն տարածվում լեզվածայրին։

Այս տվյալները նույնպես խոսում են (ր)-ի շփականության (նեղվածքայնային բնույթի) օգտին և ապացուցում նրա նմանությունը (շ-ծ)-ի հետ։

¹⁵ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 82։

Աղյուսակ 1
Բառամիջի եռակի բաղաձայնական խմբեր (ր)-ի մասնակցութեամբ

ձ ա յ ն ո ր ր						կիսա- շփական		սլ ա յ թ ա կ ա ն					չփա- կան	
	ր	ն	մ	յ	լ	ճ	ձ	տ	կ	դ	թ	ր	սլ ր	վ
ձ ա յ ն ո ր	մ	րմր	րմն											
	ն												րնդ	
	ր								րրկ					
ն ա յ ն ո ր	ց	րցր	րցն	րցմ	րցյ			րցտ	րցկ		րցթ			րցվ
	ձ		րձն								րձդ			րձվ
	ծ	րծր	րծն								րծդ			րծվ
	ճ								րճկ					րճվ
	շ							րշտ	րշկ					
ս լ ա յ ն ո ր	դ	րդր												
	կ	րկր		րկմ	րկյ	րկլ	րկճ	րկձ		րկկ	րկդ		րկթ	րկվ
	թ			րթմ										րթվ
	տ		րտն		րտյ			րտտ	րտկ					րտվ
	թ		րթն	րթմ	րթյ				րթկ					րթվ
	դ				րդյ									րդվ
	սլ								րսկ					րսվ
ս լ ա յ ն ո ր	շ	րշր	րշն											րշվ
	ս		րսն					րստ						րսվ
	դ													րդվ

Աղյուսակ 2

Բառամիջի եռակի բաղաձայնական խմբեր (ռ)-ի
մասնակցութեամբ

	ն	կ	ր	վ	ռ
թ	ռթն	ռթկ			յթռ
ճ	ռճն	ռճկ			
թ			ռթթ	ռթվ	
ն				ռնվ	

Սակայն լեզվածայրի և լեզվի առջևի մասի դիրքը դեռ լրիվ չի բացահայտվում քմապատկերներից: Լեզուն կարող է չկաշել քիմքին, բայց մոտենալ նրան՝ ստեղծելով այլ տիպի խոչընդոտներ: Այդ կարելի է եզրակացնել լեզվի կողքի կտրվածքների ռենտգեն պատկերների տվյալներից:

(Ռ)-ի և (ր)-ի ռենտգենպատկերների ուսումնասիրությունը ցույց է տալիս լեզվի ողջ զանգվածի դիրքի նմանությունը այդ երկու ձայնորդները արտասանելիս: Այդ նմանությունը ավելի մեծ է լեզվի միջնաետին մասերի նկատմամբ, բայց նրանց միջև այնուամենայնիվ կա և տարբերություն՝ (ր)-ի ժամանակ լեզուն ավելի քիչ է իջած իր ետին մասում, քան (ռ)-ի ժամանակ: Ինքանի բացվածքը մոտավորապես նույնն է այդ երկուսի արտասանության ժամանակ: Այսպես, տարբեր դիկտորների մոտ (ր)-ի դեպքում այն հավասար է 3, 11 և 13 մմ, իսկ (ռ)-ի դեպքում՝ 6, 12, 13 մմ: Շրթունքները բացված են, բայց ոչ կլորացված կամ դուրս ցցված: Բերանի և կուրդի խոռոչների հարաբերությունը մոտավորապես նույնն է երկու հնչյունների արտասանության ժամանակ: Լեզվատակի ոսկորի և ըմպանի դիրքը նույնպես չի ցուցաբերում զգալի տարբերություններ այդ հնչյունների արտասանության ժամանակ (տե՛ս նկ. 35 և 36):

Այդ բոլոր նմանությունների հետ մեկտեղ նրանց միջև գոյություն ունի մի զանազանություն, որը հավանորեն էական դեր է խաղում նրանց տարբերակման համար: Ինչ վերաբերում է լեզվածայրի դիրքին: (Ռ)-ի ժամանակ լեզվածայրը առջևի մասի հետ մոտենում է վերին լնդերին և օդի հոսքի տակ թույլ մնալով՝ ուժեղ թրթռում է, մի քանի անգամ արագ հարվածելով ավելոններին, իսկ ր-ի ժամանակ այն թեև մոտենում է նույն տեղին կամ ավելի ետ, բայց չի հարվածում, այլ մնում է իր շեղոք դիրքում՝ ստեղծելով նեղվածք: Օդի հոսքը անցնելով այդ նեղվածքով՝ շփվում է նրա եզրերին (լեզվի առջևի մասին), և դրա հետևանքով ստեղծվում է շփական հնչյուն: Բայց, ի տարբերություն այլ բաղաձայնների, այստեղ նեղվածքի եզրերը ավելի լայն են (հմտ. նկ. նկ. 33, 34 և 17): Լեզվածայրի և քիմքի միջև եղած տարածությունը կարող է շատ քիչ լինել՝ բայց նա միշտ կա և դրանով է պայմանավորվում (ր)-ի շփական բնույթը (ինչ վերաբերում է (ր)-ի միահարվածությանը, ապա պետք է ասել, որ եթե դա համապատասխաներ իրականության, ապա մենք չէինք կարող երկար արտասանել ր-ն՝ մի զարկից ավելին կտար (ռ), բայց, ինչպես հայտնի է, (ր)-ն էլ է հնարավոր երկարացնել (հմտ. տար և տարր), ինչպես և (ռ)-ն:

Այս բոլոր տվյալները հավաստում են, որ 1) հայերեն (ռ) ձայնորդը թրթռուն է, որի արտասանության ժամանակ լեզվի առջևի մասը, մնալով թույլ օդի հոսանքի ազդեցության տակ, սկսում է արագ և ուժգին հարվածել քիմքի առջևի մասին, ըստ որում այդ հպումները պարտադիր են և առանց նրանց չի ստացվի համապատասխան հնչյուն: Լեզվի միջին մասը փոս է ընկած. իսկ նրա եզրերը բարձրացած են և հպվում են քիմքի եզրերին, նսխապատրաստվելով հաջորդ ձայնավորին: Ի տարբերություն (ռ)-ից, (ր)-ն սովորական շփական (նեղվածքային) բաղաձայն է, որի արտասանությունը մոտենում է շփականներին: (ր')-ի ժամանակ նեղվածքը ստեղծվում է լեզվի ծայրի և ավելոնների միջև, որի միջով օդը անցնելիս ստեղծում է յուրահատուկ աղմուկ: Այսպիսով, (ր)-ն ապիկա-ավելոլային (ծայր-լնդերային), շփական ձայնորդ է, իսկ (ռ)-ն՝ ապիկա-ավելոլային թրթռուն ձայնորդ, որը վերջին հաշվով հսկայական բաղաձայնների շարքին է պատկանում: